

ԱՎԵԼԻ ԼԱՎ ԵՐԵՎԱՆ

Սիրելի՛ երևանցիներ,

Չորս տարի առաջ, ստանալով Ձեր վստահության քվեն, երևանի պատմության մեջ միասին բացեցինք նոր էջ՝ մեկնարկ տալով աննախադեպ և բազմաթիվ ծրագրերի իրականացմանը:

Արված աշխատանքներն, անշուշտ, մեծ ծավալ են կազմում, և մեր հարազատ քաղաքում առկա են բազմաթիվ դրական փոփոխություններ:

Վերջին տարիները փաստում են, որ նպատակասլաց լինելու և համատեղ ջանքեր գործադրելու արդյունքում մենք միասին շոշափելի առաջընթաց ենք արձանագրել՝ մեր հնամենի ու նորօրյա քաղաքին հաղորդելով նոր որակ, նոր ոճ ու նոր լիցքեր:

Կանոնակարգվել և զարգացում են ապրում համայնքային կյանքի բոլոր ոլորտները՝ բարեկարգման, կանաչապատման, կոմունալ, սոցիալական, մշակույթի, տուրիզմի, կրթության, սպորտի և այլն:

Մենք ունենք լավ քաղաք, ԼԱՎ ԵՐԵՎԱՆ՝ սիրված ոչ միայն երևանցիների, այլև համայն հայության կողմից:

Նոր անելիքներ: Անպայման:

Մեր քաղաքը մեր տունն է: Այստեղ ենք իրականացնելու նորանոր ծրագրեր՝ առավել բարելավելու յուրաքանչյուրի կենցաղն ու ստեղծելու մայրաքաղաքային լիարժեք մթնոլորտ: Արդեն կյանքի կոչված բազմաթիվ ծրագրերն ու միջոցառումները պետք է ունենան իրենց շարունակականությունն ու զարգացումը:

Այս հավատով ենք ներկայացնում Ձեզ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԵՐԵՎԱՆ ունենալու համար անհրաժեշտ մեր ծրագիրն ու հետագա քայլերը:

Բոլորիս հույսերի ու հույզերի, մեր սրտի մայրաքաղաք երևանը թևակոխում է զարգացման և կայուն հեռանկարի մի նոր փուլ:

Եվ այս փուլում ևս Ձեր վստահության կարիքն ունենք:

Մենք պատրաստակամ ենք շարունակելու ամեն դրականն ու լավը՝ բոլորիս համար ստեղծելով ավելի բարեկարգ, ավելի հարմարավետ, ավելի մաքուր, ավելի կանաչ, ավելի լուսավոր, ավելի անվտանգ, ավելի գեղեցիկ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ԵՐԵՎԱՆ:

ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետական կուսակցություն



1. Քաղաքաշինական Երևան

Լավ Երևան 2009-2013 թթ.

- 120 բնակարան չորրորդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների համար
- Մասնավոր ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում, ներդրումային միջավայրի բարելավում
- * թվով 105 հասարակական և բազմաֆունկցիոնալ բազմաբնակարան շենքերի և շինությունների շահագործման հանձնում (1 մլն 265 քմ մակերեսով)
- * ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղի (Ազատության հր.)
- * հեծանվահարապարակ՝ միջազգային չափանիշներին համապատասխան
- * «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր մասնաշենք
- Մատենադարանի երկրորդ մասնաշենքի կառուցում
- Շառլ Ազնավուրի տուն-թանգարանի կառուցում
- Առևտրի և ժամանցի ժամանակակից կենտրոնների բացում:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ.

- «Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի մշակում և ընդունում
- Տրանսպորտային հանգույցների վերակառուցում և բեռնաթափում
- * Լենինգրադյան փողոցը Ադմիրալ Իսակովի պողոտային կապող նոր ավտոմայրուղի
- * Ուլենցի - Ռուբինյանց փողոցները միացնող նոր ավտոճանապարհ
- * Արտաշատի խճուղի - Շիրակի փողոց - Արգավանդի ճանապարհային հանգույցը միացնող ճանապարհ
- Ճանապարհափողոցային ցանցի ընդլայնում, մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափող, շրջանցող ճանապարհների, տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների կառուցում
- «Հին Երևան» նախագիծ
- Կոնդ թաղամասի կառուցապատման և վերակառուցման նախագծի մշակում
- Իսակովի - Լենինգրադյան և Աթենքի փողոցներով պարփակված տարածքների գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում
- Չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար նոր բազմաբնակարան շենքերի կառուցում
- Հրանտ Մաթևոսյանի թանգարանի հիմնում
- Կրկեսի շենքի կառուցում
- Ժամանակակից արվեստի թանգարանի նոր շենքի կառուցում
- Ժամանակակից հյուրանոցային ցանցի ընդլայնում
- Համայնքի և մասնավոր հատվածի համագործակցության զարգացում
- Միջազգային ներդրումների խրախուսում
- Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի մասնաշենքի վերանորոգում
- Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտի կառուցում
- Տիգինայի թաղամասի կառուցապատման ծրագիր
- Ուսանողական ավանի կառուցում:



2. Բարեկարգ երևան

ա) բարեկարգ փողոց

Լավ երևան 2009-2013 թթ.

- Շուրջ 50 խճուղիների, պողոտաների և փողոցների՝ ներառյալ մայթերի, եզրաքարերի, դիտահորերի ամբողջական հիմնանորոգում
- Ավելի քան 30 փողոցների վերակառուցում և հողային ծածկի ասֆալտապատում
- Փողոցների և մայթերի շուրջ 4 մլն քառ. մետր ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում
- Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում (Դավիթաշենի, Գ. Նժդեհի)
- Թվով 14 վերգետնյա անցումների կառուցում:

Ավելի լավ երևան 2013-2017 թթ.

- Քաղաքային նշանակության մայրուղիների հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում և ասֆալտապատում
- Թեքահարթակների կառուցում
- Հենապատերի վերանորոգում
- Վերգետնյա և ստորգետնյա անցումների կրկնապատկում
- Փողոցների և մայթերի ասֆալտբետոնե և սալիկապատ ծածկի վերանորոգման աշխատանքների շարունակում
- Քարաթափման կանխարգելիչ միջոցառումների ծրագրեր:

բ) բարեկարգ շենք ու բակ

Լավ երևան 2009-2013 թթ.

- Վթարային պատշգամբների նորոգում
- Բազմաբնակարան 2650 շենքերի տանիքների հիմնանորոգում և վերանորոգում
- Թվով 423 բազմաբնակարան և հասարակական շենքերի ֆասադների և թվով 144 կամարանցումների վերանորոգում ու գունազարդում
- Բազմաբնակարան շենքերի 3430 մուտքերի և 950 վերելակների վերանորոգում
- Շուրջ 70% բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերականգնում
- Թվով 800 բակային տարածքներում մանկական խաղահրապարակների կառուցում
- Ավելի քան 30 մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում:

Ավելի լավ երևան 2013-2017 թթ.

- Բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի 100% վերականգնում
- Նոր մանկական խաղահրապարակների և ֆուտբոլի դաշտերի կառուցում
- Շենքերի ֆասադների և կամարանցումների մաքրում, նորոգում և գունազարդում
- Շենքերի ջերմամեկուսացում, էներգաօգտագործման արդյունավետության բարձրացում
- Բազմաբնակարան շենքերի մուտքերի, վերելակների, տանիքների հիմնանորոգման և վերանորոգման շարունակականության ապահովում
- Պատշգամբների վերանորոգում:



3. Մաքրուր և կանաչ երևան

Լավ երևան 2009-2013 թթ.

- Մաքրության և աղբահանության համալիր ծրագրի իրականացում
- Անսմաքրման ժամանակակից տեխնիկայի ձեռք բերում
- Քաղաքի հանրային և բակային տարածքներում մեծ և փոքր աղբամանների տեղադրում
- Երևանի քաղաքային տնկարանի ընդլայնում և ջերմատան կառուցում (5000քմ)
- Թվով 18 զբոսայգիների և պուրակների ստեղծում և վերականգնում (ընդհանուր 13.3 հա տարածք)
- Ջրավազանների և շատրվանների ամբողջական վերականգնում և ավելացում
- Ավելի քան 70 կմ երկարությամբ ոռոգման ցանցի նորոգում և ընդլայնում
- Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի ավելացում (20 հա)
- Սիզամարգային խոտածածկի ավելացում և ձևավորում (61 հա):

Ավելի լավ երևան 2013-2017 թթ.

- Միջազգային չափանիշներին համապատասխան աղբահան, փողոցները մաքրող և լվացող, ձնահալաք մեքենաների ձեռք բերում և շահագործում
- Աղբի տեսակավորման, վերամշակման ձեռնարկության հիմնում
- Նոր այգիների հիմնադրում և զբոսայգիների վերականգնում
- Կանաչ տարածքների վերականգնման շարունակականություն
- Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի ավելացում
- Ոռոգման ցանցի ընդլայնման, նորոգման շարունակականության ապահովում
- Ծաղկապատման և սիզամարգային խոտածածկ տարածքների ավելացում
- Անտառվերականգնման ծրագիր՝ Եռաբլուրի և Փարոսի բլուրի տարածքի, Հաղթանակի զբոսայգու և Ծիծեռնակաբերդի անտառապուրակային վերականգնում:





4. Լուսավոր և հարմարավետ Երևան

Լավ Երևան 2009-2013 թթ.

- Նորաոճ ու հարմարավետ 1000 նստարանի ու 500 աղբամանի տեղադրում
- Ցայտադրությունների վերագործարկում (180 հատ)
- Թվով 41 շենքերի, 63 արձանների և 48 ճարտարապետական կոթողների գեղարվեստական լուսավորություն
- Շուրջ 43 այգիների և պուրակների արտաքին լուսավորում
- Փողոցների և մշակութային հաստատությունների կողմնորոշիչ ցուցանակների միասնական ոճի մշակում և տեղադրում
- Գովազդային ցուցանակների, վահանակների չափորոշիչների սահմանում
- Հեռուստաաշտարակի լուսավորում:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ.

- «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի իրագործում
- Էլեկտրոնային չվացուցակներով հագեցված նոր կանգառասրահների կառուցում
- Քաղաքային նոր կահավորանքով հագեցվածության աստիճանի էական ավելացում
- Փողոցների և բակերի ժամանակակից էներգախնայող լուսավորում, արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում
- Մշակութային օջախների կողմնորոշիչ ուղղորդող ցուցանակների տեղադրում
- Շենքերի արտաքին ձևավորման (լուսավորության) շարունակականության ապահովում
- Անվճար հայտարարությունների ցուցանակների տեղադրում բոլոր վարչական շրջաններում:





5. Կրթական և սպորտային Երևան

Լավ Երևան 2009-2013 թթ.

- Համայնքային անվճար մանկապարտեզներ 25.000 երեխաների համար
- Դպրոցների և մանկապարտեզների վերանորոգում և հիմնանորոգում
- Դպրոցների և մանկապարտեզների ջեռուցման հիմնախնդրի ամբողջական լուծում
- Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ջեռուցման հիմնախնդրի մասնակի լուծում
- Բակային, սպորտային, մշակութային ծրագրերի իրականացում
- Մրցումների և օլիմպիադաների կազմակերպում բակերի, վարչական շրջանների և քաղաքի մակարդակներով
- «Օգնիր դպրոցիդ» և «Օգնիր մանկապարտեզիդ» սոցիալական ծրագրերի իրականացում:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ

- Մանկապարտեզների կահույքի և կենցաղային գույքի թարմացում
- Մանկապարտեզների և դպրոցների, արտադպրոցական հաստատությունների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում
- Նախադպրոցական կրթության մատչելիության ավելացում
- Կրթության որակի բարելավում և մրցունակության ապահովում
- Արտադպրոցական ուսումնական հաստատությունների ջեռուցման հիմնախնդրի ամբողջական լուծում
- «Ուսանողական Երևան» նախագծի մշակում
- Երևանը՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի կենտրոն
- Գեղասահքի զարգացման ծրագրի իրականացում և համապատասխան մարզադպրոցի կառուցում
- Զանգվածային սպորտի զարգացում:





BYBLOS BANK

ЛОМБАРД

ПОСРЕДСТВОМ
КОТОРОГО
ПОЛУЧАЮТ
ПОДАРОК

ПОДАРОК
КОТОРЫЙ
ПОЛУЧАЮТ
ПОДАРОК



ПОДАРОК
КОТОРЫЙ
ПОЛУЧАЮТ
ПОДАРОК

6. Մշակութային և գրավիչ Երևան

Լավ Երևան 2009-2013 թթ.

- Մշակույթի տների, ստեղծագործական կենտրոնների, գրադարանների և երաժշտական դպրոցների հիմնանորոգում և ջեռուցման ցանցի կառուցում (թվով 16)
- Գրադարանների ջեռուցման ցանցի վերանորոգում, էլեկտրոնային սպասարկման համակարգի ներդնում, նոր գրականության ձեռք բերում
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք - 2012» տիտղոսի ստանձնում՝ համապատասխան միջոցառումների ու ծրագրերի ցանկի մշակում և իրականացում
- Կենդանաբանական այգու մասնակի վերանորոգում, արդիականացում, նոր կացարանների կառուցում
- Համաքաղաքային, ազգային ու պետական տոնական միջոցառումների կազմակերպում
- Ճանաչողական տուրիզմի շրջանակում «Երևան Սիթի Տուր»-ի կազմակերպում:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ.

- Մշակույթի տների, թանգարանների, երաժշտական ու արվեստի դպրոցների, գրադարանների հիմնանորոգման շարունակականության ապահովում, ջեռուցման հիմնախնդրի ամբողջական լուծում
- Մշակութային մակարդակի և որակի, մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծում
- Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակում և իրականացում
- Արտերկրի հետ մշակութային երկխոսության ծրագրերի շարունակում և իրականացում
- Կենդանաբանական այգու ամբողջական վերանորոգում, արդիականացում:





7. Առողջ և ապահով երևան

Լավ երևան 2009-2013 թթ.

- Թվով 4 առողջապահական հաստատությունների ջեռուցում և վերանորոգում
- Բուժսարքավորումների և ծառայությունների արդիականացում
- Շտապ բուժօգնության նոր մեքենաներ (թվով 35)
- Մոր և մանկան սոցիալական ծրագրեր
- Հաշմանդամների ազատ տեղաշարժման համալիր ծրագրեր
- Վարակիչ հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացում
- Սոցիալապես անապահով խմբերին օժանդակության համալիր ծրագիր
- Բարեգործական 12 ճաշարանների կազմակերպում
- Կարիքավոր ընտանիքների 3600 երեխաների ամառային հանգստի կազմակերպում
- Քաղաքապետարանի լիազորությունների շրջանակում ընտանեկան նպաստների համակարգի կատարելագործում
- Անօթևաններին ժամանակավոր կացարաններով ապահովում և 162 մարդու խնամքի կազմակերպում:

Ավելի լավ երևան 2013-2017 թթ.

- Առողջապահական հաստատությունների ջեռուցման խնդրի հիմնովին լուծում
- Երևանի ենթակայության առողջապահական հաստատությունների վերանորոգման և վերազինման շարունակականության ապահովում
- Ընտանեկան բժշկության զարգացման օժանդակության և մասնագիտացված բուժօգնության մատչելիության շարունակականություն
- Բնակչության հիգիենիկ-համաճարակային անվտանգության և կանխարգելման ապահովում
- Հաշմանդամների ազատ տեղաշարժման համալիր ծրագրերի շարունակականության ապահովում
- Անօթևաններին ժամանակավոր կացարաններով ապահովում և խնամքի կազմակերպում
- Կարիքավոր ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպման շարունակականություն
- Սոցիալապես անապահով խմբերին օժանդակության, բարեգործական ճաշարանների գործունեության շարունակականության ապահովում
- Միջուկային բժշկության տարածաշրջանային գերազանցության կենտրոնի գործարկում
- Համայնքային ծառայողի առողջապահական պարտադիր ապահովագրում:



8. Հասանելի Երևան

Հավ Երևան 2009-2013 թթ.

- Թվով 380 նոր ավտոբուսների շահագործում
- Երևանի վերգետնյա ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում
- Մետրոպոլիտենի արդիականացում
- Միկրոավտոբուսների շահագործման նվազեցում
- Տրանսպորտի տեխնիկական վիճակի և սպասարկման որակի բարձրացում
- Երթևեկության անվտանգության բարձրացում:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ.

- Միջին և մեծ ուղևորատարողությամբ ավտոբուսների թվաքանակի էական ավելացում
- Երևանի վերգետնյա ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի ստեղծում
- Ավտոկայանատեղիների կարգավորում
- Մետրոպոլիտենի արդիականացում և նոր շարժակազմի թարմացում, ավելացում
- Տրոլեյբուսային պարկի թարմացում
- Հասարակական տրանսպորտում բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման ծրագիր
- Տրանսպորտի երթևեկությունը կարգավորող և լուսացույցային նոր համակարգի, երթևեկության նոր նշանների տեղադրում:





WiFi

9. i ԵՐԵՎԱՆ

Լավ Երևան 2009-2013 թթ.

- Երևան քաղաքի ինտերակտիվ տեղեկատվական քարտեզ
- «Անվտանգ քաղաք» տեսահսկման համակարգ
- www.myyerevan.am տուրիստական և համաքաղաքային պորտալ՝ քաղաքի տեսարժան վայրերի ուղիղ միացումներով
- «Էլեկտրոնային չվացուցակների համակարգ» հասարակական տրանսպորտի ժամանմանը մնացած ժամանակների ցուցադրում կանգառասրահում
- «Wi-Fi ամենուր» հասարակական վայրերում և օբյեկտներում անվճար անլար ինտերնետ հասանելիության ապահովում
- Մետրոպոլիտենի տեսախցիկներ
- Համացանցով էլեկտրոնային ծառայությունների տրամադրում
- www.iYerevan.am կայքը: Այն նոր հարթակ է մայրաքաղաք Երևանի բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, քննարկման և իրականացման համար՝ ստանալով քաղաքացիների առաջարկները և ծանոթանալով նրանց:

Ավելի լավ Երևան 2013-2017 թթ.

- Բնակիչներին մատուցվող նոր էլեկտրոնային ծառայություններ
- Երևանում տեղեկատվական միջավայրի հետագա զարգացում
- Անվճար անլար ինտերնետ հասանելիության ընդլայնում
- Բնակիչների անվտանգության ապահովման համար տեխնոլոգիաների ինտենսիվ օգտագործում:



ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Արա
Երնջակյան



Հան
Իգիթյան



Աստղիկ
Գևորգյան



Հովհաննես
Մուսաեղյան



Հայկ
Դեմոյան



Հրանտ
Թոխատյան



Մարտին
Վարդազարյան



Հովհաննես
Թոքմաջյան



Սմբատ
Լպուտյան